□□.□□□□□□□□□□□□□□□□՝ □□□□□□□□ □□□□□□□□□,□□□□□□□□□□ □ □□□ □□□ □□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□ □□

Հին կտակարանի այս սրբերի նահատակության մասին պատմվում է Մակաբայեցիների երկրորդ գրքի Զ և է գլուխներում: Ն. Ք. 2-րդ դարում Հրեաստանը գտնվում էր Սելևկյան իշխանապետության ներքո: Վիճակն ավելի է սրվում Անտիոքոս Եպիփանի թագավորության օրոք: Նա հրահանգում է, որ իր իշխանության ներքո գտնվող բոլոր ազգերն ընդունեն հունական մշակույթն ու պաշտեն հունական աստվածներին: Սակայն Մատաթիա անունով մի քահանա իր որդիներով ու եղբայրներով ապստամբում է այս որոշման դեմ՝ հավատարիմ մնալով Աստծո Օրենքին և Ուխտին: Վերջինիս որդիներից էր Հուդան, որն իր քաջագործությունների շնորհիվ ստացավ Մակաբեոս հունական անունը, որ նշանակում է մրճահար, հարվածահար: Հետագայում նրանց ընտանիքին անվանեցին Մակաբայեցիներ:

Եղիազար քահանան Մատաթիայի որդին էր՝ քաջ, աստվածավախ և իմաստությամբ լի: Վերջինիս բերանին գելոց են դնում և ստիպում խոզի միս ուտել, որն արգելված էր ըստ հրեական Օրենքի: Քանի որ նա մանկուց դաստիարակվել էր աստվածային պատվիրաններով ու օրենքներով, մերժում է այդ առաջարկը՝ գերադասելով արիաբար մեռնել և բարի անուն թողնել, քան պախարակվել իր ընկերներից ու հարազատներից: Երկար կտտանքներ կրելուց հետո սուրբն ավանդում է իր հոգին՝ հետագա սերունդների համար դառնալով քաջության և ներշնչանքի աղբյուր:

Նույն այս շրջանին է պատկանում մի քաջասիրտ մոր ու նրա յոթ զավակների նահատակությունը: Նրանց էլ Եղիազար քահանայի նման պարտադրում են խոզի միս ուտել, սակայն Շամունան և իր յոթ որդիները հավատարիմ են մնում իրենց հայրերի հավատին՝ արժանանալով կենաց անթառամ պսակին:

□□□□□ □□□□□□□□□

14.07.2008
03.08.2009
26.07.2010
07.02.2011
30.07.2012
22.07.2013
03.02.2014

27.07.2015
18.07.2016
30.01.2017
23.07.2018
04.02.2019
03.08.2020
26.07.2021
31.01.2022
31.07.2023
22.07.2024
03.02.2025
27.07.2026
19.07.2027
31.01.2028
23.07.2029
04.02.2030